ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ

բ.գ.թ. դոցենտ, ԼՂՀ վաստակավոր գրագետ Ա.ՅՈՒՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

25.04.2023թ.

ԿԱՐԾԻՔ

Գայանե Սլավիկի Հովհաննիսյանի «Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը 1920-1950-ական թթ.» Է.00. 01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

2023թ. ապրիլի 25-ին տեղի ունեցավ ԱրՊՀ Պատմության և քաղաքագիտության ամբիոնի նիստը, որին մասնակցում էին ԱրՊՀ պրոռեկտոր, պ.գ.դ.,պրոֆ. Վ.Մ.Ավանեսյանը, պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան՝ պ.գ.թ.,դոցենտ Ա.Բ.Խաչատրյանը, պատմ.գիտ.դոկտոր Վ.Ռ.Բալայանը, պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ՝ պ.գ.թ., դոցենտ Ն.Պ.Սարումյանը, ամբիոնի դոցենտներ, պատմ.գիտ.թեկնածուներ Վ.Ա.Սաֆարյանը, Մ.Մ.Բալայանը, Ի.Ն.Ավանեսյանը, դոցենտ Ն.Գ.Սողոմոնյանը, ավագ դասախոսներ Լ.Լ.Հովհաննիսյանը,Գ.Լ.Սարգսյանը:

Քննարկվեց Գայանե Սլավիկի Հովհաննիսյանի «Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը 1920-1950-ական թթ.» թեկնածուական ատենախոսությունը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ պատմ.գիտ.թեկնածուներ Ա.Բ.Խաչատրյանը, Ն.Պ.Սարումյանը, Վ.Ա.Սաֆարյանը, ավագ դասախոս Լ.Լ.Հովհաննիսյանը, ովքեր հրապարակեցին իրենց գրավոր կարծիքները:

Պատասխան ելույթով հանդես եկավ ատենախոս Գ.Հովհաննիսյանը:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչ պատմ.գիտ.թեկնածու, դոցենտ Ն.Պ.Սարումյանը:

Հարավային Կովկասում ստեղծված արդի աշխարհաքաղաքական լարված պայմաններում, երբ առավել կարևորվել է Լեռնային Ղարաբաղի դերն ու

նշանակությունը քննարկվող թեման խիստ արդիական է, հատկապես Լեռնային Ղարաբաղի խորհրդային ժամանակաշրջանի ժողովրդագրական տատանումների պատմության հետ կապված քիչ ուսումնասիրված հարցերը ավելի խորությամբ լուսաբանելու և հանրությանը ներկայացնելու տեսանկյունից: Դա խորհրդային Ադրբեջանի կողմից ԼՂԻՄ-ի բնակչության նկատմամբ վարած ազգային-խտրական և էթնիկ զտումների ծավալած հակահայ քաղաքականության հերթական փուլերի ժամանակաշրջանն էր, որոնց ծանր հետևանքները իրենց ազդեցությունն ունեցան ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնների վրա:

Ելնելով այն հանգամանքից, որ ժողովրդագրական հիմնախնդիրները հիմնարար և ռազմավարական նշանակություն ունեն ցանկացած պետության համար, քանի որ այդօրինակ փոփոխությունները խորը և երկարաժամկետ ազդեցություն ունեն հասարակության տնտեսական և սոցիալական զարգացման վրա, ուստի և ավելի է կարևորվում քննարկվող թեման ԼՂԻՄ ժողովրդագրական զարգացման ընթացքի և առանձնահատկությունների ուսումնասիրության պատմական ընթացքը ներկայացնելու դիտանկյունից:

Ուսումնասիրության մեջ ժողովրդագրական գործընթացների վերլուծության վիճակագրական, մաթեմատիկական, վերլուծական-քննական, նկարագրական, համադրության, ընդհանրացման, համակարգման, ինդուկցիայի, դեդուկցիայի, ինչպես նաև ժամանակագրական մեթոդների կիրառելիությունը էլ ավելի է ընդգծում հետազոտության աղբյուրագիտական արժեքայնությունը:

Հաշվի առնելով, որ ԼՂԻՄ-ի 1923-1959 թթ.-ի ժողովրդագրական պատկերը պատմական հետազոտման է ենթարկվել առաջին անգամ, ուստի անհրաժեշտ է հետազոտության արդյունքները օգտագործելի դարձնել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության համար պատմաքաղաքական հարթությունում՝ ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի էթնիկ փոխակերպման քաղաքականության և նրա գործիքակազմի բացահայտման համար:

Գայանե Հովհաննիսյանը բավականին աշխատանք է կատարել, աշխատել է նաև ԼՂՀ Պետական արխիվում, օգտագործել է տպագիր սկզբնաղբյուրներ, մենագրություններ, գիտական հոդվածներ, վիճակագրական վարչության տեղեկագրերի նյութեր, մարդահամարի տվյալներ, ինչպես նաև հանրագիտարաններ,

պարբերական մամուլի նյութեր, ատենախոսություններ և էլեկտրոնային շտեմարաններ:

Ուշադրության արժանի են ատենախոսության մեջ ամփոփված հեղինակի հիմնավորված և տրամաբանված մոտեցումները, եզրահանգումները, փաստարկված համոզիչ գնահատականները, որոնք համահունչ են ընդունված գիտական մոտեցումներին:

Բարձր գնահատելով Գ.Հովհաննիսյանի ատենախոսության գիտական արժեքը միաժամանակ հարկ ենք համարում արտահայտել նաև որոշակի ցանկություններ.

1.Ատենախոսության մեջ Գ. Հովհաննիսյանը համապարփակ կերպով անդրադառնալով ԼՂԻՄ 1920-50-ական թթ. ժողովրդագրական գործընթացներին և մանրամասն վերլուծելով 1926, 1939, 1959 թվականների մարդահամարների տվյալները ցանկալի կլիներ ավելի խորությամբ լուսաբաներ աղրբեջանական իշխանությունների կողմից ԼՂԻՄ-ից 1930-ական թթ. վերարտադրողական տարիքի տղաների հավաքագրումների անդրադարձները վերլուծեր զուգահեռաբար կապելով 2020թ. սեպտեմբերյան արցախյան պատերազմում երիտասարդ սերնդի բնաջնջման գործողությունների հետ:

2.Ատենախոսության ժամանակագրական և տարածքային շրջանակները որոշակի ճշգրտման և համահարթեցման կարիք ունեն: Հեղինակը ատենախոսության ժամանակագրական բաժանման սկիզբ համարում է 1921թ., իսկ տարածքային շրջանակը ներառում է 1923-1959թվականները:

3.Ատենախոսության երկրորդ գլխում գերադասելի կլիներ ընդգծել 1930-ական թթ.սկզբին ԼՂԻՄ-ից 11-13 տարեկան հասակի տղա երեխաների պարտադիր հավաքագրման մասին փաստերը զուգակցելով ատենախոսի կողմից նշված 1930-ական թթ-ի սկզբներից աշխատուժի պակասի «հիմնավորմամբ» մարզի հայ բնակչության հավաքագրումների գործընթացի հետ:

4.Ցանկալի կլիներ եզրակացության մեջ զուգահեռներ անցկացվեր ուսումնասիրվող ժամանակահատվածի ժողովրդագրական իրավիճակի և 1960-80-ական թվականների ստեղծված ժողովրդագրական իրավիճակի հետ ամփոփիչ խոսքի տարբերակով:

Որոշվեց՝ քննարկման ներկայացված Գ.Հովհաննիսյանի «Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը 1920-1950-ական թթ.» խորագրով պատմական

գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ դրական կարծիք հայտնել և առաջարկել թույլատրել հանրային պաշտպանության:

Անտարակույս, նշված դիտողություններն ու ցանկությունները չեն նսեմացնում հեղինակի կատարած հսկայածավալ և գիտական բարձրարժեք աշխատանքը: Այն ամբողջովին համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող բոլոր պահանջներին և պատրաստ է հրապարակային պաշպանության: Հեղինակն էլ արժանի է իր իսկ հայցած պատմական գիտությունների թեկնածուի Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատված է ԱրՊՀ Պատմության և քաղաքագիտության ամբիոնի 2023թ. ապրիլի 25-ի նիստում (արձանագրություն թիվ 65):

ԱրՊՀ Պատմության և քաղաքագիտության
Ամբիոնի վարիչ՝ պ.գ.թ.,դոցենտ Ն.Պ.Սարումյան

Պատմ.գիտ.թեկնածու, դոցենտ Ն.Պ.Սարումյանի
Ստորագրությունը հաստատում եմ:

ԱրՊՀ գիտ.քարտուղար կ.գ.թ., դոցենտ Գ.Գ.Մարգարյան

25.04.2023թ.